Մրցույթի գլխավոր պրոդյուսեր Արթուր Գրիգորյանը ինչքան էլ ծանր է տանում «Ընծայի» մասին քննադատությունները, պետք է ընդունի դրանք, քանզի եթե մի երկրում չկա առողջ քննադատություն, ապա ոչ մի գովասանք սիրտ չի հովացնի:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԸՆԾԱ» ԵՐԳԻ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԸ

Լուսինե
ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

«Ընծայի» մասին խոսելիս հիմնականում քննադատում են ԼՂՀ իշխանություններին, օրինակ՝ այն բանի համար, որ դասական երաժշտությանն աջակցելու, հիվանդանոց վերանորոգելու կամ էլ ճանապարհ կառուցելու փոխարեն «էժանագին էստրադայի» զարգացմանն ուղղված քայլերին են աջակցում, որ, փոխանակ այդ գումարներն ուղղված լինեն տեղացի կադրերին զարգացնելուն, ամեն տարի ճոխ հոնորարներ են վճարում դրսից եկած երգիչներին, դեկորատորներին, հնչյունային ռեժիսորներին, լուսավորողներին, որ մի քանի օր որակյալ արդյունք ստանան:

Նախ, սկսենք այն բանից, որ «Ընծայի» գաղափարը ծնվել է այն ժամանակ, երբ Հայաստանի երգի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավարը պարբերաբար գալիս էր Ղարաբաղ՝ «Արցախի ձայն» նախագիծն իրագործելու նպատակով: Իսկ նախագիծը հովանավորվում էր այն ժամանակ դեռեւս առաջին տիկին Իննա Ղուկասյանի կողմից, որն էլ միջնորդեց, որ այս մրցույթն անցկացվի կառավարական մակարդակով: Կազմակերպիչների նպատակն ի սկզբանե եղել է տաղանդավոր երգիչ-երգչուհիներ երեւան հանելը եւ այն, որ մրցույթը դառնա Արցախում տեղի ունեցող կարեւոր իրադարձություն:

Ու Արթուր Գրիգորյանից հաճախ կարելի է լսել, որ մրցույթն իր համար առաջին հերթին ամբողջ աշխարհով մեկ Արցախը գովազդելն է: Այս խոսքերն են գլխից հուզեցին նաեւ ԼՂՀ իշխանավորներին, որոնք պետական բյուջեից շռայլորեն գումարներ ներդրեցին Գրիգորիչի գլխավորությամբ կազմակերպվող այս հայրենանվեր ակցիային: Չորս տարի անընդմեջ մրցույթի մոտ երկու տասնյակ մասնակիցներ, մի այդքան էլ ժյուրիի անդամներ, նկարահանող խումբ, տեխնիկական աշխատողներ եւ այլն ամեն տարի մայիս ամսին ժամանում են Ստեփանակերտ, տեղավորվում քաղաքի լավագույն հյուրանոցներից մեկում, օրհնվում Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի կողմից, ոգեւորվում ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանի գովասանական խոսքերից եւ անցնում իրենց «հիմնական» աշխատանքին՝ երգել ու զարմացնել արցախյան հանդիսատեսին եւ այդ ամենը ցուցադրել ոչ ավել, ոչ պակաս հայկական առաջին հեռուստատեսությամբ:

Անկեղծ ասած, ստեփանակերտցիներն ամեն անգամ անհամբերությամբ են սպասում «Ընծային»: Այդ օրերին քաղաքում յուրօրինակ ակտիվություն է զգացվում: Հնարավորություն է ստեղծվում վերջապես «էլիտար» միջոցառման մասնակցել, որտեղ տեղին կլինի հագնել նոր հագուստ, խոսել գլամուր թեմաներից, մոտիկից տեսնել սիրելի դերասանին, իսկ ամենակարեւորը, որ «Ընծայի» շնորհիվ Արցախի հանրային հեռուստատեսությունը վերջապես ի վիճակի է լինում եթերաժամը լցնել: Համահայկական այս երգի մրցույթ-փառատոնին մասնակցում են տարբեր երկրներից ժամանած հայ երգիչ-երգչուհիներ, այդ թվում՝ եւ Արցախից: Առաջին երկու տարիներին գրան-պրին շնորհվեց արցախցի մասնակիցներին՝ Ռազմիկ Ամյանին, Վարդան Բաղալյանին: Անցյալ տարի գրան-պրիին արժանացավ իրանահայ երգչուհին, որի անունը այդպես էլ չհիշվեց հանդիսատեսի կողմից:

Մրցույթը արդար է, մասնակիցները գոհ են, հանդիսատեսը՝ նույնպես, հովանավորները մի քանիսն են՝ գլխավորն էլ՝ Վահե եւ Վերոնիկ Կարապետյանները, Հ1-ն է եթեր հեռարձակում, Անիտա Հախվերդյանը եւ Արմեն Ամիրյանը ժյուրիի կազմում են, ժյուրիի անդամների թվում կան նաեւ ղարաբաղցիներ... Թվում է՝ ոչ մի բան չի պակասում, բայց արի ու տես, որ երբ հեռավոր սփյուռքում կամ թեկուզ Երեւանում Հանրային հեռուստատեսությամբ դիտում են «Ընծա» մրցույթը, այն «Դոռեմիից» ոչնչով չի տարբերվում: